ՄԱՐԴԱՍՊԱՆԸ ԳԱՀԻ ՎՐԱ*

(Թուրքիայի գաղտնի ոստիկանության պետի նոթերը)

Հատվածներ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Թուրքական պատմության արյունալի էջերը տակավին կարգի չեն բերվել: Արյունը շարունակվում է թափվել բոլոր ուղղություններով, և հնարավոր է, որ թուրքական ժողովուրդը նրանում շնչասպառ լինի:

Երբեմնի հզորագույն Օսմանյան կայսրության կարերը ճարճատյունով քանդվում են, և այն, ինչպես մի հսկայական նավ, քամու կամքով սլանում է անդեկ և անառագաստ: Ու՞ր կտանեն նրան արյունոտ ալիքները կամ նա որտե՞ղ, ի վերջո, կփշրվի ստորգետնյա քարերից, ցույց կտա մոտ ապագան, սակայն կասկածի ենթակա չէ, որ նա դատապարտված է, և որ ծովի կյանք-հորձանքը նրան կկլանի անմնացորդ կերպով:

Որպեսզի ծանոթանանք ժամանակակից Թուրքիային և նայենք նրա արյունալի էջերին, որոնք թաքնված են սուլթանական գրասենյակի գաղտնարաններում, նախ և առաջ անհրաժեշտ է հրաժարվել այն երևակայական ենթադրությունից, որ երկրի ժամանակակից դրությունը *[1917թ., թարգմ.]* ամենևին չի առնչվում ոչ այնքնան վաղ անցյալին:

Թուրքիայում ոստիկանության զանազան պետեր շատ են եղել, որովհետև սուլթան Աբդուլ Համիդն առանց լրտեսների չէր կարող գոյատևել, ինչպես առանց նրանց չէին կարող ապրել օսմանյան մյուս տիրակալները:

Նման ոստիկանապետեր մնացին նաև նոր վարչակազմի օրոք, քանի որ երիտթուրքերը, վախենալով նոր հեղաշրջումից, նրանց կարիքն ունեին, ինչպես նաև նրանց օգնությամբ անպատժելիորեն ազատվում էին իրենց համար անցանկալի մարդկանցից:

Հեղաշրջման ժամանակ, այսինքն 1908 թվականին, հայտնի մի անձի հանձնարարվել էր մի տհաճ պարտականություն՝ ամենակարող կոմիտեի ցուցումով բանտարկել նրա կարծիքով նոր վարչակազմի համար վտանգավոր մարդկանց: Այդ վտանգավոր պարոնների թիվը բավարարից շատ

* Ներկայացվում է ըստ 1918թ. ռուսերեն, նույնանուն հրատարակության (Халжетлапе М. Убийца на троне (Записки начальника тайной полиции в Турции). Петроград, "Научное дело", 1918, 239с.):

եղավ: Ոմանց անմիջապես քանտ նետեցին, մյուսներին, եթե նրանց հաջողվեց թաքնվել, սկսեցին հետապնդել, իսկ ինչպես առաջինների, այնպես և երկրորդների ունեցվածքն անցավ հաղթողների ձեռքը և հետագայում ինչ-որ տեղ անհետացավ: Ինչպես ասում են, այն տեղավորվեց ինչ-որ մարդկանց ընդարձակ գրպաններում:

Բոլոր այդ բանտարկությունները կատարվում էին լրտեսների ցուցմունքով: Ինչպես ընթերցողը տեսնում է, Թուրքիայում ըստ էության ոչինչ չի փոխվել և լրտեսությունը նախկինի պես դարձել է պաշտամունք:

Առգրավված գույքի թվում, բացի դրամից և թանկարժեք քարերից, գտնվում էին նաև գաղտնի ոստիկանապետի՝ հայտնի Զիյա-բեյի որոշ իրերը, որոնք երկար ժամանակ սարսափ էին հարուցում իրենց դաժանությամբ: Ինչ-որ թղթերով լի հսկայական պահարանը, որը շտապ փախուստի ժամանակ մոռացվել էր տանտիրոջ կողմից, ընկավ թշնամիների ձեռքը, սակայն տակն ու վրա անելով ոստիկանապետի բնակարանը և ոչինչ չգտնելով բացի թղթերից, իշխանությունները սահմանափակվեցին միայն կնիքներ դնելով, չփորձելով նույնիսկ իմանալ թղթերի բովանդակությունը: Բոլորը խորապես համոզված էին, որ ճարպիկ խուզարկուն ծայրերը պահել է ջրում, և որ մնացած թղթերը ոչ մի արժեք չեն ներկայացնում: Նոր պարոնները որոնում էին գլխավորապես թաքնված հարստությունները:

Շնորհիվ երջանիկ պարագաների, մեզ հաջողվեց քննել թուրքական հայտնի խուզարկուի թղթերը, որի խղճի վրա, ինչպես ասում են, ընկած են հազարավոր մարդկային զոհեր:

Այսպիսով, ընթերցողին ներկայացվող նոթերը ոչ թե հայտնի թեմայով հորինվածքներ են կամ գրական ստեղծագործության պտուղներ, այլ հիմնված են իրական փաստաթղթերի վրա, որոնք կուռ կերպով նկարագրում են ժամանակակից Թուրքիան և Համիդից մինչև ներկայիս ժամանակի մռայլ դարաշրջանը: Սուլթանական ոստիկանության նախկին պետը, անկասկած, ականավոր անձնավորություն է և իրենից ներկայացնում է ողջ երկրի արտացոլումը՝ նրան բնորոշ հատկություններով և արևելյան գաղտնիքներով:

Ջոկելով այդ հետաքրքիր թղթերը և դրանք կարգի բերելով, գալիս ես այն եզրակացության, որ այն, մի կողմից, ներկայացնում է հետաքրքիր անձնավորության ինքնակենսագրական տեղեկությունները, մյուս կողմից՝ Համիդի և ողջ Թուրքիայի մահարձանը: Ոստիկանական պաշտոնյան աներևակայելի ցինիզմով ցույց է տալիս այն ամբողջ սարսափը, որը երկար տարիներ տիրում էր Բոսֆորի ափին և նախանձելի անկեղծությամբ իրերը և իրադարձությունները անվանում է սեփական անուններով:

Հանրահայտ խուզարկուն պաշտոնապես պետ չէր համարվում. այդ պատվավոր պաշտոնը պատկանում էր Համիդի սիրեցյալին, հետագայում ոչ պակաս հայտնի Ահմեդ-փաշային, որը Թուրքիա էր եկել որպես ոտաբոբիկ մի տղա՝ անհայտ ծագումով: Հետագայում, հասնելով հեքիաթային դիրքի, նա, իհարկե, գտավ իր հարազատներին և իր ցեղը, հատկապես առաջիններին, որոնք դարձան ծարավների մի ամբողջ խումբ: Ծագումով չերքեզ, Ահմեդ-փաշան համեմատաբար կարճ ժամանակում դարձավ սուլթանի ամենամերձավոր մարդը, և ոչ ոք չգիտեր թե ամեն օր այդ ծեր չերքեզը ինչի՞ մասին էր փսփսում փաղիշահին: Այդ սիրեցյալից վախենում էին նույնիսկ նախարարները, և սուլթանի ներկայությամբ ոչ ոք չէր համարձակվում խոսք ասել ծերունկի մասին: Նվիրված լինելով իր

տիրակալին, Ահմեդ-փաշան քչերից մեկն էր, որ ծանր բռպեին նրան չլքեց և պատրաստ էր նրա հրամանով մարտնչել բոլոր երիտթուրքերի հետ: Խորամանկ չերքեզը հիանալի կերպով ուսումնասիրել էր Թուրքիան և համոզված էր, որ քարձրացված աղմուկից վախենալ պետք չէ, որ ամեն ինչը կընթանա հնի պես, անհրաժեշտ է միայն սպասել և չտաքանալ: Դժբախտաբար, Համիդը չլսեց իր հավատարիմ ծառային և ստիպված էր տեղը զիջել նվազատեղյակ եղբորը: Ծեր փաշան իրավացի էր, սակայն այդ մասին սուլթանը գլխի ընկավ, երբ արդեն ուշ էր: Ի դեպ, Մահմեդն էլ երկար ժամանակ չզբաղեցրեց իր բարձր տեղը՝ նա արագ կերպով խաղալիք դարձավ Էնվերի՝ բոսֆորյան այդ դուրսպրծուկի ճարպիկ ձեռքերում:

Խիստ և վայրենի բարքեր գոյություն ունեն բոլոր ժողովուրդների մոտ, սակայն նրանցից ոչ մեկը չի համեմատվի թուրքականին: Նույնիսկ ներկայումս, երբ թվում է իրականացվեց զոհված մարտիկների ավանդական երազանքը, մնացին այն նույն ձևերը, և երիտթուրքերն այն նույն արվեստով են ազատվում իրենց համար վտանգավոր մարդկանցից, ինչպես տապալված սուլթան Համիդը:

Այն պայքարը, որը տարվում էր երկար տարիներ ավելի լավ ապագայի համար, իր հետ տարավ հազարավոր զոհեր և հանգեցրեց միայն նրան, որ արյունալի սուլթանի կամ, ինչպես Գլադստոնը Համիդին անվանեց, իշխանության գահի վրա մարդասպանի փոխարեն կանգնած է մի այլ սուլթան, որն ամբողջովին գտնվում է մի ճարպիկ հրոսախմբի ձեռքում, որը բավականին շուտ իրեն խայտառակեց ողջ աշխարհի բոլոր քաղաքակիրթ մարդկանց աչքում և որը, ի վերջո, կկործանի երբեմնի հզորագույն Օսմանյան կայսրությունը:

Մոհամեդ-բեկ Խաջեթլաշե
Փարիզ, մարտ 1917թ.

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ
ԳԼՈՒԽ I

Բանն անցյալում է, և ուստի, ինչ էլ որ պատահի, անհրաժեշտ է ասել, որ մեր փաղիշահը, իրոք որ ծագում էր հայուհի մորից: Այդ մասին գոյություն ունեցող աներևակայելի բնույթի բազմաթիվ աղբյուրներից հայտնի է, որ Համիդի մայրը՝ սուլթանուհի Էսմե-խանումի նախկին պարուհին, կամավոր կերպով իսլամ էր ընդունել իր մահից զրեթե մեկ ամիս առաջ: Համիդի հայր Արդուլա Մեջիդը իր սիրուհուն չէր շտապեցնում փոխել կրոնը և, այսպիսով, ապագա սուլթանը ծնվեց քրիստոնյա-հայուհուց, ինչքան էլ որ նա աշխատում էր ապացուցել հակառակը:

Ատելով քրիստոնյաներին և հատկապես՝ հայերին, նախկին սուլթանը չէր կարող չպահպանել իր մոր մասին վառ հիշողությունները: Շնորհիվ նրա խնամքի նա կենդանի մնաց և մեծանում էր լրիվ քարեկեցիկ պայմաններում: Մոր մահից հետո, որին փոքրիկ Համիդը գաղտնիորեն դառը ողբում էր, նրա ճակատագիրը կտրականապես փոխվեց: Նա միայնակ էր մեծանում իր եղբայրների և քույրերի մեջ, որոնք ուրախ-զվարթ խաղում էին, չմտածելով ապագայի մասին: Սուլթանի բազմաթիվ կանանցից մեկին դաստիարակման հանձնված փոքրիկ արքայազնը բոլորովին հեռացավ իր հասակակիցներից և ապրում էր, կարծես թե, ժամանակից դուրս: Եվ իրոք,

նրա դրությունը սուլթանական ընտանիքում աննախանձելի էր: Զննելով շրջակա միջավայրը և իր համար պարզելով կյանքի իմաստը, երիտասարդ արքայազնը սկսեց երազել անհնարինի մասին: Իր Մեջիդ հորից հետո սուլթան պիտի դառնար Մուրադը, այնուհետև, ըստ ավագության, նրան պիտի հետևեր ինքը՝ որպես իշխող սուլթանի ավագ որդի: Ոչ մի հույս չկար, սակայն երազները նրան չէին լքում: Պալատում ապրում էր մի ծեր սուլթանուհի, հավանական է՝ Մեջիդի մայրը, որի նկատմամբ Համիդը տածում էր ինչ-որ մտերմություն: Այդ կինն անկեղծանալով նրան հայտնեց, որ իրեն տանջում է մի գաղտնի ձայն, մշտապես շշնջալով այն մասին, որ նա կդառնա սուլթան: Սնահավատությամբ և մեծ նշանակություն տալով ամեն տեսակի հրաշքների, պառավը հրավիրեց ինչ-որ մի շեյխի, որը կռահելով երիտասարդ արքայազնի ցանկությունը, առանց մի որևէ խոսակցության նրան հայտարարեց որ Ալլահին հաճելի կլինի, որ նա նստի մեծ օսմանների գահին:

Լրացավ Համիդի 34 տարին, երբ սուլթան դարձավ Մուրադը: Յոթ ամիս անց, անսպասելիորեն, Մուրադին խելագար հայտարարեցին, և ծեր սուլթանուհու նախագուշակությունն իրականացավ ինչպես հեքիաթում: Որոշ ժամանակ անց, ուսումնասիրելով պալատական կյանքը և լավ հասկանալով շրջապատողներին, նա, մերժելով ռեգենտի կոչումը, իրեն սուլթան հռչակեց: Այդ պահից սկսվում է թուրքական պատմության նոր ժամանակաշրջանը: Երիտասարդ սուլթանը աշխատեց նախևառաջ ազատվել իրական և երևակայելի թշնամիներից և, վախենալով հետագա հեղաշրջումներից, ձգտում էր իրեն հիմնովին պաշտպանել զանազան պատահականություններից: Թագավորության գրեթե առաջին օրերից նա ամբողջ ուժով աշխատում էր ապացուցել, որ չի սիրում քրիստոնյաներին և նրանց անխնա հետապնդում էր: Դա միանգամայն հասկանալի է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նրա ծագումը հայտնի էր շատերին: Ժամանակի ընթացքում, զորեղ կերպով կատարելով Իսլամի բոլոր ծեսերը, նա ստիպեց մոռանալ իր ծագումի մասին: Նա մշտապես համոզված էր, որ ոսկով կարելի է գնել յուրաքանչյուր մարդու և, եթե հանդիպում էր այնպիսի մեկին, որին չէր կարելի գնել, սաստիկ վրդովվում էր և, այնուամենայնիվ, չէր հավատում: Նա նույնիսկ չէր հավատում հանրահայտ Բիսմարկին և շրջապատին մշտակես հավատացնում էր, որ թուրքական լիրաներով կարող է ավարել նաև այս գյուտրի բերանը: Հասկանալի է, որ նրանք, ովքեր ցուցաբերում էին կրոնի նկատմամբ նվիրվածություն և խստորեն կատարում էին դրանի հրահանգները, ի դեմս նրա ուժեղ պաշտպան էին ձեռք բերում և, տառացիորեն, ոսկեզարդվում էին: Շատերը, ավելի ճիշտ մեծամասնությունը, օգտվում էին այդ թուլությունից, և մզկիթները լցնում էին, իրր, հավատացյալներով, գաղտնիորեն հույս ունենալով, որ փադիշահն այդ մասին կիմանա և կպարգևատրի: Իր ողջ կյանքը սուլթանն օգտագործեց ոչ թե պետության բարօրության, այլ իր անձի պահպանման համար: Օրերով նա զբաղվում էր ճարտարապետների և բանվորների հետ, իր պալատը լավագույն ձևով անմատչելի և անհրկիզելի դարձնելու համար: Բացի մշտական պահպանությունից, որն առանձնահատուկ վիճակում էր, սուլթանն իր տունը դարձրեց մի ամրոց, ուր սովորական ճանապարհով թափանցելն անհնար էր: Միայն նավերից թնդանոթները կարող էին վնասել այդ որջը:

Մշտապես տագնապելով իր կյանքի համար և կասկածելով, որ յուրաքանչյուրը ցանկանում է իրեն թունավորել, Համիդը ստեղծեց զանա-

զան պաշտոններ և մշտապես ուրիշներին ստիպում էր իր ուտելուց առաջ համտեսել ուտելիքը: Սուրճը եփում էին իր ներկայությամբ, նրա ներկայությամբ էլ այն համտեսում էին, նույնը կատարվում էր նաև ուտելիքի հետ: Վերջ ի վերջո նա ստեղծեց մի առանձնահատուկ աշխարհ, բոլորովին ոչ նման նրան, ինչ գտնվում էր պալատի ցանկապատից դուրս: Սուլթանը սովորաբար արթնանում էր առավոտյան ժամը 4-ին, լոգանք էր ընդունում և գնում իր աշխատասենյակը, որտեղ նրա համար սուրճ էին պատրաստում և ծխախոտ մատուցում: Նա ուշադիր նայում էր և, ընտրելով կույտից, տալիս էր ծխելու ուրիշներին: Վերջապես համոզվելով, որ թունավորված չէ, նա սկսում էր ծխել և ծխախոտը դեռ չէր գցում մինչև քունը: Ժամը տասին մոտ սկսվում էր նախաճաշը և քարտուղարների զեկույցները: Սուլթանը շատ քիչ էր ուտում և, ընդհանրապես, սնունդը նրան օգուտ չէր բերում: Նա կուլ էր տալիս մեծ կտորներով, և այդ պատճառով հաճախ հիվանդանում էր ստամոքսային հիվանդություններով: Վախենալով բժիշկներից, Համիդը դիմում էր տնական միջոցների, ընդ որում հաճախ ստիպում էր պատրաստված դեղորայքը սկզբից խմել այն մարդուն, որը դեղորայքը բերել էր: Նման պայմաններում, բնական է, իսկապես դժվար էր թունավորել տիրակալին, թեպետ, որքան ինձ հայտնի է, ոչ ոք այդ մասին չէր էլ մտածում: Իմ ներկայությամբ եղավ միակ դեպքը, երբ մերժված սիրո համար վրիժառության պատճառով, դժբախտ մի կին ցանկացավ վախեցնել տիրակալին, որպեսզի դրանով ապացուցի իր սերը: Այդպիսի հաճույքի համար նա մեկնեց Իզմիրի ծոցը՝ ձկներ կերակրելու: Ճիշտն ասած՝ բազմաթիվ մարդիկ գնացին հօգուտ ձկների:

Մշտապես վախենալով պալատական դավաճանությունից, նա կրկնապատկում էր նախազգուշական միջոցները և, շնորհիվ դրան, յուրաքանչյուր գիշեր փոխում էր ննջարանը, չխոսելով այն մասին, որ մթությունից վախը նրան նետում էր մի ինչ-որ անհասկանալի սարսափի մեջ: Նրա համար գիշերը մի իսկական կտտանք էր: Այդ պատճառով անքնությունը նրա համար դարձել էր սովորական մի բան, և նա դժվար թե օրական քներ 3-4 ժամ: Բնական է, որ դրա հետ մեկտեղ սուլթանն աշխատում էր պարզևատրել պահպանությանը, վախենալով կաշառումից: Գանձապետերն ինձ ասում էին, որ յուրաքանչյուր գիշերվա պահպանությունը Համիդին նստում էր 10 հազար ռուբլի: Դա աներևակայելի մի բան է, եթե չգիտենաս տիրակալի բնավորությունը: Այդպիսի ճանապարհով նա, իրոք, անհնարին էր դարձրել կաշառումը: Ի դեպ, երկրում հետաքրքիր մի լուր էր տարածվում սուլթանի նմանակների մասին: Դրանք մի քանիսն էին, և բազմաթիվ հայեր, որոնք նման էին սուլթանին, կյանքին հրաժեշտ էին տալիս բացարձակապես նմանության պատճառով: Ի դեպ, հենց հայերն էին, որ կարող էին իրենց միջավայրից Համիդին նման մարդկանց առանձնացնել: Ուստի հասկանալի է նրա անհաշտ ատելությունն այդ ազգի նկատմամբ: Մի ժամանակ, թերթերից իմանալով, որ Բեռլինում արհեստական քթեր են սարքում, նա մտածում էր դիմել վիրաբույժին, սակայն, հավանաբար, այդ քայլին չգնաց շրջապատի կարծիքի, իսկ գլխավորը՝ սեփական դեմքի փոփոխման պատճառով:

Սուլթանի կյանքի մասին պատմել չափազանց դժվար է, որովհետև այն աչքի էր ընկնում զարմանալի բազմազանությամբ՝ իրեն պահպանելու ձգտումի տեսակետից: Այստեղ երևում է փաղիշահի ողջ խելքը, որը, թվում է, որ ոչ մի բանի մասին այնքան չէր մտածում, որքան իր անձի մասին:

Ընդհանրապես, Համիդի կյանքի մասին կարելի է գրել ամբողջ հատորներ:

ԳԼՈՒԽ VII

Վանի նահանգապետը, հայտնի Բահրի-փաշան՝ ծագումով լազ, իր կարիերան սկսել էր իր բազմաթիվ նմանակների պես: Միակ տարբերությունն այն է, որ մենք, թուրքերս, պաշտոնի և իշխանության հասնում էինք ոչ թե իշխանական ծագումի, այլ լակեյության շնորհիվ: Իսկ մնացած դեպքերում փաշան այն նույն տգետն էր, ինչպես և մենք: Ունենալով մեծ ունեցվածք, նա իրեն շրջապատել էր անթափանցելի պատնեշով, այնպես, որ ես էլ դժվարությամբ էի իմանում նրա գործունեության մասին: Ինչպիսի դրության մեջ էլ որ լիներ բարձրաստիճանավորը և որքան էլ նրան սիրեր փաղիշահը, ես պարտավոր էի տեղեկացնել վճռականապես ամեն ինչի մասին, ինչ նրանք անում էին և նույնիսկ, եթե հնարավոր էր, ինչ մտածում էին: Բնական է, որ միշտ չէր հաջողվում, դա կապված էր մեծ ռիսկի հետ, ինչպես եղավ, օրինակ, Բահրիի հետ: Մի անգամ պալատում ինձ տեսնելով, նա, չքաշվելով բազմաթիվ բարձրաստիճանավորների ներկայությունից, իմ երեսին վիրավորանք շպրտեց, որ ես երբեք չեմ մոռանա: «Լսիր, լրտես, - ասաց նա, - քո անասուններին կարգադրի, որպեսզի ավելի զգույշ լինեն, քանի որ ես ոչ միայն նրանց, այլ նաև քեզ՝ ստահակիդ, այն աշխարհ կուղարկեմ, և դու կդադարես քո ստոր կյանքով փչացնել օդը: Լավ հիշիր, որ լազը իր սպառնալիքը չի կրկնում»: Արյունը խփեց գլխիս: Ինձ զսպելով,ես պատասխանեցի. «Կներեք, փաշա-էֆենդի, դուք այն հասցեով չեք դիմում: Ձեր սպառնալիքները պահեք ուրիշի համար և, եթե դուք հեշտությամբ մորթում եք անմեղ հայերին, ապա դա չի նշանակում, որ կարելի է ծաղրանքի ենթարկել փադիշահի ծառաներին, և եթե ստանամ մեզ բանտարկելու մասին հրամանը, ինձ չեն վախեցնի բոլոր լազերը միասին վերցրած...»:

Սակայն, ես քիչ հեռացա հարցից: Անհրաժեշտ է ասել, թե ի՞նչ էր Բահրին անում իր նահանգի հայերի գլխին, որտեղ նա լիակատար և անհրկելի տեր ու տիրական էր:

Իմ գործակալները ինձ տեղեկացնում էին ուղղակի աներևակայելի բաներ, ու ես ոչ մի կերպ չէի կարողանում հասկանալ, թե նրա մոտ որտեղի՞ց է այդ ատելությունը հայերի նկատմամբ: Բերեմ, օրինակ, իմ գործակալներից մեկի հետաքրքիր զեկուցագիրը, որին, շնորհիվ նրա խիզախության և խորամանկ ուղեղի, ես հովանավորում էի: Հարյուրավոր անգամ համոզվում էի, որ նրան անվերապահորեն կարելի է վստահել: Հավատարիմ լինելով իմ ցուցումներին, իմ գործակալը յուրաքանչյուր շաբաթ հատուկ մարդու ձեռքով ինձ ուղարկում էր մանրամասն նկարագրությունը, թե ի՞նչ էր կատարվում վիլայեթում: Դա անհրաժեշտ էր, քանի որ տերությունները պահանջում էին դադարեցնել քրդերի գազանությունները և նահանգապետի կողմից իրականացվող հեռացումները: Հետո ես խորապես ափսոսացի, տակավին չիմանալով, որ ի դեմս այդ մարդու ձեռք կբերեմ զորավոր թշնամու: Այն ժամանակ ես կարող էի հեշտությամբ և հիմնովին վրեժ լուծել նրանից, սակայն վերը նշված դեպքը տեղի ունեցավ զգալիորեն ուշ:

Գործակալը գրում էր ինձ. «Տեղեկացնում եմ Ձեզ՝ բեյ-էֆենդի, որ Բահրին մեզ զարմացնում է բանտարկյալների նկատմամբ իր դաժանու-

թյամբ: Երեկ, ծառայության բերմամբ, ես բանտում ականատես դարձա այն բանին, թե նա ինչպես է հաշվեհարդար տեսնում դժբախտների հետ: Ճիշտն ասած, մինչև վերջ չդիմացա, որի համար ներողություն եմ խնդրում: Հնարավոր չէր տեսնել, թե վայրենի լազերն ինչպիսի ծաղրանքների են ենթարկում ռազմագերիներին: Բանտախցիկներից մեկում պահվում էին 15 հոգի. դռան առաջ դրել էին մի տակառ, որը լեփ-լեցուն էր երկաթավուն մեխերով: Դռան մոտ կանգնած էին հրացանավոր զինվորները և բանտարկյալներին հատ-հատ դուրս էին բերում: Հենց այստեղ, միջանցքում բանտարկյալին մերկացնում էին և մերկ գցում էին տակառի մեջ: Զնդանը միանգամից լցվում էր սարսափելի վայնասունով, սակայն այդ ամենը բոլորովին էլ չէր ազդում աշխատողների վրա: Տակառը թեքում էին աջ և ձախ կողմերը, մեխերը մտնում էին մարմնի մեջ, և արյունը հոսում էր գետնին: Երբ ճիչերը լռում էին, տակառից հանում էին ջնջոցի վերածված բանտարկյալին, որովհետև տասը րոպեում ամբողջ արյունը դուրս էր հոսում: Եվ այդ բոլորը կատարվում էր բանտարկյալների աչքի առջև: Ես տեսա դեմքեր, որոնք կյանքումս երբեք չեմ մոռանա, էֆենդի-բեյ: Գրեթե բոլորը երիտասարդներ էին՝ քսան և քիչ ավելի տարիքի: Նրանք բոլորը դողում էին, և լսվում էր, թե ինչպես ատամները կափկափում էին: Մի՞թե բառերով կարելի է հաղորդել այդ սարսափը: Ինձ թույլ չհամարեք, սակայն, իրոք, այդպիսի տեսարաններից հետո ապրել չես ուզում, և մարդիկ զզվելի են դառնում: Իմ ներկայությամբ երկու մարդ հանկարծ սկսեցին ծիծաղել, և դա սելագարություն էր: Նրանք հոհոում էին շղթայված ձեռքերով փորները բռնած և նրանց աչքերը միանգամից սկսում էին փայլել: Նրանք այլևս ոչինչ չէին ցանկանում, ոչինչ չէին տեսնում: Կես ժամ անց եկավ ինքը՝ Բահրին և կարգադրեց դիակները հավաքել: Նա ինձ այնպես նայեց, որ, հավատացե՛ք, բեյ-էֆենդի, սիրտս շուտ եկավ: Սակայն ես համարձակորեն դիմացա նրա հայացքին և խոնարհվելով հայտարարեցի, որ հանցագործները չխոստովանեցին: «Համարձակվում եմ Ձեզ ասել, փաշա-էֆենդի, այսպիսի ճանապարհով դժվար է որևէ բան իմանալ»: «Ինչպե՞ս թե, - բղավեց նա, - այդ սրիկաները դեռ լռո՞ւմ են, ես նրանց կստիպեմ խոսել այլ ճանապարհով»...

Ես չգիտեմ, թե Ձեզ ինչպե՞ս փոխանցեմ, թե հետո ինչ տեղի ունեցավ: Նա հրամայեց քաշել-բերել բանտարկյալների քույրերին և մյուս բանտարկյալների աչքերի առաջ լազերը սկսեցին ծաղրել մերկացրած աղջիկներին: Ես աչքերս փակեցի: Մի րոպե ինձ թվաց, որ գիտակցությունս կորցնում եմ, հանկարծ ես հիշեցի այն դեպքը, երբ ես ձեր հանձնարարությամբ Ալժիրում էի: Այնտեղ նույն բանը արեցին մուսուլմաններին նկատմամբ ֆրանսիական զինվորները: Չորս երիտասարդ աղջիկներ բռնաբարվեցին նահանգապետի աչքի առջև, իսկ երիտասարդները ծիծաղում էին. նրանք նույնպես չորսն էին: Ավել բան չկա հայտնելու, և ես ձեզ շատ եմ խնդրում, բեյ-էֆենդի, իմ նամակը ոչնչացնել, եթե ոչ՝ ինձ կարող են կասկածել հայերին համակրելու համար, թեպետև ես ամենահավատարիմ մահմեդական եմ: Ի դեպ, ձեր բարձր և ուժեղ հովանավորությունն ինձ ընդունակ է դարձնում կատարել ձեր բոլոր հանձնարարությունները, որոնք դուք, ձեր բարիությամբ, տալիս եք ինձ, անարժանիս: Իսկ ահա այս տեղեկությունները ես գրում եմ առանձին թերթիկի վրա, որպեսզի հնարավոր լինի ցույց տալ նրանց, ում դուք անհրաժեշտ կհամարեք: Բահրի-փաշան ընդունեց հյուպատոսներին և նրանց լավ հյուրասիրեց: Ես շատ էի վախե-

նում, որ նա չհրամայի նրանց թունավորել: Նրանից ամեն ինչ կարելի է սպասել: Սակայն ամեն ինչ բարեհաջող անցավ: Ենթադրենք, անիծյալ զառուրները խառնվում են ոչ իրենց գործերին և ցավալի է, իհարկե, հաշվետվություն տալ օտարներին: Սակայն Բահրի-փաշան նուրբ քաղաքագետ է և հյուպատոսներին կարողացավ համոզել, որ բանտարկյալները վաղուց ի վեր ազատված են, իսկ նրանք, ովքեր նստած են, կդատվեն, և որ, ընդհանրապես, ինքը հետևում է դատական գործերի ճշտությանը և մասնակցում է դատավարությանը: Այդ նույն օրը հյուպատոսները հաղորդագրություններ ուղարկեցին Ստամբուլ, և ինձ համար շատ հետաքրքիր է իմանալ, թե նահանգապետի վարքագիծը որևէ մեկի վրա ազդեցություն, արդյոք, գործե՞ց: Ինչ վերաբերում է գերմանական և ավստրիական հյուպատոսներին, ապա ես համոզված եմ, որ նրանք ուղարկել են հանգստացուցիչ հավաստումներ, որովհետև նրանք իզուր չէ, որ մեր բարեկամներն են համարվում...»:

Բնական է, որ այդ նամակը՝ այսինքն իմ ենթակայի պաշտոնական զեկույցը ես, անշուշտ, պահպանեցի, որովհետև ինձ համար կանոն դարձրի ոչ մի բան չպատռել և յուրաքանչյուր թղթի կտորը, համենայն դեպս, պահել: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, թե ես որքան իրավացի էի, պահպանելով գրված թուղթը. հետագայում նա ինձ շատ փող բերեց: Ստանալով նահանգապետի գործունեության մասին զեկույցը, որը հանձնարարված էր իմ պետի կողմից, ես այդ նույն երեկոյան կարդացի պետիս՝ նա վատ էր հասկանում ուրիշի ձեռագիրը: Ուշադրությամբ լսելով Ահմեդ-փաշան գլուխը քափ տվեց, թուղթն ինձնից վերցրեց և հետը պալատ տարավ: Հաջորդ օրն ինձ իր մոտ կանչեց Իզեթ-փաշան և հարց ու փորձ արեց, թե որքանո՞վ են ստույգ իմ կողմից ստացված տեղեկությունները:

- Ի՞նչ միտք ունի զբաղվել այդ անպիտաններով, - ասաց քարտուղարը: - Դե թոնել ես, կարգադրիր սպանել: Չեմ հասկանում, - և նա տարակուսած տարածեց թևերը:

Ես նույնպես ոչինչ չէի հասկանում և լուռ նայում էի այդ մարդուն, որը սովորական գրագրից, ինչպես և ես, հասավ այն բարձունքին, որի ճանապարհը տրված է միայն ճակատագրով նշվածներին: Չէ որ նրա ձեռքում իշխանություն կար, որի մասին չէր կարող երազել և ոչ մի մեծ վեզիր: Այն ամենը, ինչը փչում էր նրա խելքին, նա կարող էր հեշտությամբ իրականացնել, և ես, իմ վիրավորված ամբողջ սրտով, ատում էի այդ պարոն-երկրորդ քարտուղարին:

Սակայն նրա մասին ես ավելի մանրամասն կպատմեմ մի ուրիշ անգամ, որովհետև եթե նա անձամբ մարդկանց չէր մորթում և խեղդում, ապա, համենայն դեպս, հարյուրավոր կյանքեր իրենց անհետացումով պարտական են նրան: Նրա հրամանով, որը ստորագրել էր տուլբանը, թերևս առանց վերջինիս տեղեկացվածության, տեղի էին ունենում այնպիսի բաներ, որոնցից նաև Բահրին գլուխը կորներ: Երկու կամ երեք օր անց ազնվատոհմիկ Սուլեյման-փաշայի, իսպանական նախկին հրեայի տանը կայացավ Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ խորհրդակցություն: Գրեթե ոչ ոք չքննադատեց նահանգապետի գործողությունները, և բոլորը զարմանում էին, թե տերությունները ինչո՞ւ են քթները խոթում այս գործի մեջ: Սուլեյմանը մեծ ճառ արտասանեց, որի արդյունքում Բահրին մնաց իշխելու վիլայեթում անորոշ ժամանակով:

Նրա համար դա հանդիսացավ որպես իր գործողությունների լռակյաց հավանություն, և միայն այդ ժամանակ ի հայտ եկավ այդ մարդու ամբողջովին վայրագ բնավորությունը: Իմ գործակալի զեկույցին հաջորդեցին ռազմական գործողությունների թատերաբեմից հաղորդումները, և ես չէի հասցնում զոհերին հաշվել: Երբ ես փորձեցի ակնարկել իմ ղեկավարին այն մասին, որ նման դաժանությունը նպատակին չի հասնում, իսկ գլխավորը՝ խռովությունների առիթ է դառնում, նա խստորեն նայեց ինձ և կարգադրեց լեզուս պահել ատամների տակ. «Քո խելքի բանը չէ: Կատարիր այն, ինչ հրամայում են և քո գործակալին խորհուրդ տուր առանձնապես թուղթ չմրոտի»:

Մինչ այդ եվրոպական մամուլը շարունակում էր գոռալ, նկարագրելով այն փաստերը, որոնցից մազերը բիզ-բիզ էին կանգնում: Եվ այդ ժամանակ Իլդիզը միջոցներ ձեռնարկեց: Այդ միջոցները արժեցան մի քանի հազար լիր, և զարմանալի է, թե որքան շուտ մամուլի մի մասը, թերևս նրանցից ամենաազդեցիկը, միանգամից իր կարծիքը փոխեց Վանի վիլայեթում իրադարձությունների նկատմամբ: Ես հաճույք ունեցա իմ ղեկավարի հանձնարարությամբ երեք հազար լիր հանձնել Կոստանդնուպոլիս ժամանած գերմանական մի թերթի թղթակցին: Բացի թղթակցին երեք հազար հանձնելուց, նման քանակությամբ գումար փոխանցվեց նաև խմբագրին: Մամուլը հանդարտվեց, և հյուպատոսները մի ամսից ավել չէին անհանգստացնում իրենց դեսպանություններին, իսկ պալատը և Բահրի-փաշան անարգել անում էին այն, ինչ ցանկանում էին:

ԳԼՈՒԽ XXII

Հրավերից երկու ամիս առաջ, մի քանի գործակալներ, ճանձրանալով պարապությունից, քանի որ ժամանակավոր հանդարտություն էր տիրում և փողի կարիք ունեին, հորինեցին մի համարձակ կատակ: Խորը գիշերին, ժանդարմական համազգեստներով նրանք թակեցին մի հարուս հայի տան դուռը, որը լիովին բարեհույս էր և հայտնի՝ սուքանի պալատում: Երբ սպասավորները մուտքի դռները բացեցին, նրանք ներխուժեցին սենյակներ և վախեցած տիրոջը կարգադրեցին հետևել իրենց: Վախից դողալով, հայն անվերապահորեն կատարեց նրանց հրամանը, վստահ լինելով, որ սխալ է տեղի ունեցել և որ իրեն հիմա կազատեն: Երկու ընկերներին թողնելով պահպանելու տունը, տրիկաները նրան դուրս բերեցին փողոց, որտեղ նրանց սպասում էր կառքը և տարան բեշիքթաթի ուղղությամբ: Կալանավորի բոլոր հարցերին նրանք չէին պատասխանում: Մեկ ժամ անց կառքը կանգ առավ մի գեղեցիկ տան առջև, և ժանդարմները հային դուրս բերեցին: Մտնելով ընդունարան, բանտարկյալը գլխի ընկավ, որ գտնվում է մեծ վեզիրի պալատում և ավելի շատ վախեցավ: Ըստ երևույթին լուրջ գործ է, եթե կես գիշերին իրեն այստեղ են բերել: Դժբախտը չէր էլ կասկածում, որ գործակալներն ամեն ինչ վաղորոք նախապատրաստել էին, և, պայմանավորվելով վեզիրի մի քանի սպասավորների հետ, գործն այնպես ճարպկորեն էին սարքել, որ փորձառու մարդն էլ գլխի չէր ընկնի: Նրան թողնելով ընդունարանի մեծ սենյակներից մեկում՝ ժանդարմների հսկողության տակ, մյուսներն անհետացան և կալանավորին լարվածության մեջ պահեցին մոտ մեկ ժամ: Վերջապես եկան և նրան նորից նստեցրին կառքը: Հայի

հարցին, թե իրեն ո՞ւր են տանում, նրանցից մեկը կարճ պատասխանեց՝ բանտ և ավեց այն բանակի անվանումը, որտեղից հազվագյուտներն են ազատություն տանում: Հայը ողջ մարմնով սկսեց թփրտալ և աղերսել: Սկզբից նա առաջարկեց 5 հազար ռուբլի, որ իրեն ազատեն, սակայն ժանդարմները բացասականորեն գլուխները օրորեցին: Լիովին հուսահատված հայը գումարն ավելացրեց մինչև 15 հազար, որին նրանք համաձայնվեցին: Նրան հետ բերին և, տանալով գումարը, խորհուրդ տվեցին վաղը մի քանի օրով քաղաքից հեռանալ: Բնական է, որ այս պատմությունն ինձ հայտնի դարձավ հաջորդ օրը, սակայն ես, ավաղ, ոչինչ չկարողացա անել: Իսկ ինչ վերաբերում է Ֆեհիմին, ապա նա ծիծաղում էր իր գործակալների ճարպկության վրա և երաշխավորում էր նրանց անպատժելիությունը: Ահա թե ում ձեռքում էին գտնվում բնակչության անդորրը և կյանքը: Այնպես որ ես իրավունք ունեմ չընդունել այն բոլոր մեղադրանքները, որոնք թափվում են իմ գլխին: Ի դեպ, ես բոլորովին հեռու եմ այն մտքից, որ արդարացնեմ ինձ: Գործն անցած բան է, սակայն, որպես իմ հայրենիքի հավատարիմ զավակ, ես ինձ թույլ եմ տալիս մտածել, որ շուտով իմ հայրենիքը կազատվի վերը նկարագրված անձանցից (փառք Ալլահին, դրա համար էլ մենք թուրք ենք):

(Ռուսերենից թարգմանեց՝ Հ. Լիլոյանը)